

14178


ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՑ

№ 9.

**ԳԱՅԼԸ, ԱՂԻՔԵՄՆ ՈՒ ԷՑԸ**

(Առաջին)

ԳԻՎԻ ՀԱՅ ԿՈՂ.



ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈԼ

Տպարտան Ա. Մ. Մալխասեանցի

1914

3144

891.99

0-87

Ա. Ա.

ՊԵՏՐՈՍ ՄՈՀԱՄԵԴՅԱՆ

№ 9.

2126

1914  
23

## ԳԱՅԼԸ, ԱՇԻՔՍՆ ՈՒ ԷՃԸ

Գիրքն է 5 կ.  
1001  
1920

(Ա ռ ա կ)



Ա Կ Բ Պ Ա Խ Գ Ր Ո Գ Ո Լ  
Տպարան Ա. Մ. Մալիխասեանցի

1914



Արտասուած „Աղթիկի“ ամսագրից:

## ՊԱՅԼԸ, ԱՂԻԷՄՆ ՈՒ ԷՇԸ.

III.

Տարիներ առաջ, շատ հին ժամանակ  
Մի զայլ, մի աղւէս և մի աւանակ,  
Անտառի միջին, մարդկանցից հեռու  
Ուխտեցին իրար մէկտեղ ապրելու:

Խօսք տըւին նրանք մէկ մէկի սիրել  
Երբէք մի վատ խօսք իրարու չասել  
Միասին գրնալ, ընկնել քար ու սար,  
Գըտածն իրար մէջ բաժնել հաւասար:

Եւ այդպէս նրանք, ինչպէս եղբայրներ,  
Այդ խաղաղ կեանքով երկար տարիներ  
Հաշտ ու համերաշխ իրար հետ ապրան,  
Գըտած ու բերած միասին կերան:

Բայց ահա մի օր  
Աղւէսը քաւոր,  
Իր ուխտը մոռցաւ,  
Զար միտք յլղացաւ...

Ելաւ ու ծածուկ  
Գայլի մօտ գընաց,  
Նըրա ականջից  
Կամաց փըսփըսաց.—

— «Գիտե՞ս, զայլ եղբայր, շատ եմ անօթցել,  
Երեք օրն անցաւ ոչինչ չեմ կերել,  
Ինչպէս երեկ էլ ես քեզ ասեցի,  
Ամբողջ անտառում որս չը ճարեցի:

Ուստի էլ ինչի՞ շատ երկարացնեմ  
Քո ազնւութեան զլուխը ցաւցնեմ,  
Արի մենք այսօր մեր իշուն բըսնենք,  
Նըրա միսն համեղ միասին ուտենք»...

Գայլն այս խօսքերն երբ լըսեց  
Բարկութիւնից փըրփըրեց,  
Իրան-իրան քիչ փընթփընթաց՝  
Ապա կանգնեց ու գոռաց.—

— «Ամօթ քեզի, այ փուչ աղւէս,  
Էլ գաղան կայ քեզի պէս,  
Ճարըդ կըտրի, բալէդ մեռնի,  
Վայ քեզ, վայ քեզ, խեղճ քեռի...

Ինչպէս ուտենք մեր իշուն,  
Ե՞լ դու անարդ, վատթար շուն,  
Քո երեսին ամօթ չունի՞ս,  
Ի՞նչ է արել քեզ քեռիս:

Մէկ էլ մարդիկ ի՞նչ կասեն  
Մեր արարքը երբ լըսեն,  
Զե՞ն անարդէ ինձ ու քեզ  
Ու չեն ասէ—ամօթ ձեզ»...

Երբ այս խօսքերը գայլը վերջացրեց  
Ընկերների մէջ լրութիւն տիրեց,  
Սակայն շատ չանցած, աղւէսը նորից  
Ելաւ ու խօսեց հին-հին բաներից:

Շատ մեղքեր բարդեց խեղճ իշու վերայ,  
Խոստացաւ ատել քանի ինքը կայ.  
Ապա այնքան երկար խօսեց  
Մինչև գայլին համոզեց...

— «Բայց մենք մեր քեռուն գընանք ի՞նչ  
ասենք,  
Չէ որ ամօթ է մէկից մէկ ուտենք,  
Ուստի մեզ պէտք է զըտնել մի հնար  
Մի յանձանք փընտրել՝ պատժելու համար»:

— «Յանձանքներ շատ կան, գայլաղնւափայլ,  
Ես գաղուց զիտեմ մեղքեր այ և այլ,  
Մեղքեր, որ գործեց մեր քեռին յիմար  
Սկսած այն օրից երբ զըտանք իրար»:

Ոյս խօսքից յետոյ աղւէսը կամաց  
Գընաց մօտեցաւ մեր գայլին քաղցած,  
Ու փըսփըսալով ինչ որ խօսեցին  
Եւ հարցն իրանց մէջ կարգին վըճռեցին...

### III.

Երբ էշն ու աղւէս և գայլը յիմար  
Անտառի խորքում դէմ զիպան իրար,  
Այստեղ էլ դարձեալ քիչ առաջ զալով  
Աղւէսը խօսեց խոր գլուխ տալով.—

— «Ո՞ւր ես զընացել, ի՞մ ազնիւ քեռի,  
Թող խեղճ աղւէսը քո ցաւըդ տանի.  
Տեսնում եմ դու էլ վերջին օրերում,  
Որս ու կերակուր էլ ձեռք չես բերում:

Մենք էլ ինչպէս միշտ, քաղցած ենք  
սաստիկ  
Զգիտենք որտեղ զըտնինք ուտելիք.  
Ուստի, այ քեռի, արի այսօր մենք  
Մեզանից մէկին բըսնենք և ուտենք»...

Ես չար խօսքերից  
Գայլի հայեացքից,  
Քեռին վախեցաւ  
Լեղին ջուր դարձաւ.

Ստկայն քիչ անցած ինքն իրան ժողւեց  
Ու հանդարդ ձայնով աղւէսին հարցրեց.—  
—«Ո՞ր մէկիս ուտենք, այ անմիտ աղւէս,  
Ամօթ քեզ, ամօթ, ով դու սևերես».

«Զէ որ մենք իրար սիրել ենք անվերջ,  
Մինչ այսօր մեր մէջ չէ եղել մի վէճ.  
Ապրել ենք մէկ տեղ, հալալ եղբօր պէս  
Ու գոհ ենք եղել միշտ մէկս մէկէս»...

Էշն իր խօսքերը դեռ չեր աւարտել  
Երբ առաջ գալով գայլն սկսեց խօսել.  
—«Իսկ զու ասում ես, իմ աղնիւ քեռի,  
Ո՞ր մէկիս ուտենք, ո՞րս զոհ լինի.

«Եկ նրան ուտենք մեր այս երեքից,  
Ով որ տարիքով փոքր է ամենքից»:  
Գայլի խօսքերը հարցին տըւին վերջ,  
Ուստի դադարեց ամեն խօսք ու վէճ...

Եւ մեծի կարգով,  
Աղւէսի կամքով,  
Գայլը ձայն խընկրեց  
Ու այսպէս խօսեց. —

—«Ես շատ ծեր գայլ եմ, Նոյլը ինձ սոտաւ  
Երբ Աստծու կամքով տապանը մտաւ.  
Ես իմ աչքերով դրախտն եմ տեսել,  
Աղամ պապի հետ սեղան եմ նստել.

Ծընւել եմ վաղուց, ստեղծման օրից,  
Երբ որ դեռ չը կար ոչ որ ձեզանից»:  
Երբ գայլն իր տարին ասաց, վերջացրեց  
Կեղծաւոր դէմքով աղւէսը խօսեց. —

— «Ե՞ն, ովկ է իշշում իր ծընած տարին,  
Գիր ու թուղթ չը կար էն հին դարերին,  
Միայն լաւ գիտեմ, որ ես շատ ծեր եմ,  
Գայլի որդոց հետ տարեկից կլինեմ:

Յիշում եմ սակայն, ինչպէս տապանում  
Նոյի որդոց հետ խաղ էի անում.  
Նրանց հետ մէկտեղ վար իջայ սարից,  
Տեսայ աշխարհը ցամքած ջըրերից...

«Ծերուկ Քամի հետ ծառեր եմ տընկել  
Նըրա բուսցրած խաղողն եմ կերել»:  
Երբ որ աղւէսն էլ իր տարին ասեց  
Հերթը խօսելու մեր իշուն տըրւեց: —

— «Իսկ ես, ասաց նա, վաղուց եմ մոռցել  
Քանի՞ է տարիս, կամ Երբ եմ ծընել,  
Բայց պայտիս վերայ պապըս զըրել է,  
Աստւած իր հոգին թող լուսաւորէ.

«Ով կարդալ գիտէ  
Զեր այդ երկուսից,  
Թող տարիս ջոկէ  
Պապիս գըրածից»...

Երբ իշու խօսքերն աղւէսը լըսեց  
Թըռաւ իր տեղից ու հեռուն նըստեց,  
Իսկ քեռու տարին կարդալու համար՝  
Նըրան մօտեցաւ խեղճ գայլը լիմար:

Եւ երբ ծանը ու մեծ իր դունչը մեկնեց  
Եշը իր քացով այնպէս պինդ խըփեց,  
Որ գայլի աչքերը դուրս թըռան բընից,  
Ինըն էլ չորացած վեր չելաւ տեղից:

Գայլի անշունչ գին աղւէսն երբ տեսաւ  
Փառք տրւեց Աստծուն, իր տեղը նըստաւ,  
Ապա իր խելօք պապին լիշելով՝  
Թաթերը վերցրած ասաց ըշտապով: —

— «Ողորմի՞՛ քեզի, իմ բարի պապի,  
Աստւած քո հոգին թող լուսաւորի,  
Որ գրել-կարդալ ինձ չը սորւեցըիր  
Ու այս փորձանքից ազատ պահեցիր»...



2013

14171



## ՄԵՐ ՏՊԱԳՐԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Բանասաւեղծութիւններ	.	.	.	.	25 կ.
2.	Վշտի աղբիւրից (մեն, հրատ.)	.	.	.	.	5 կ.
3.	Տիզբոնի կալանաւորը	.	.	.	.	15 կ.
4.	Սրտի վէրքեր	.	.	.	.	10 կ.
5.	Մամիկոնեան առիւծը	.	.	.	.	30 կ.
6.	Հայրենի աւերակները	.	.	.	.	20 կ.
7.	Մոլա Նասր-Էդ-Դինի առակները	.	.	.	.	30 կ.
8.	Գայլը, աղւէսն ու էշը (առակ)	.	.	.	.	5 կ.
9.	Դալի Քէշէշի առակները	.	.	.	.	20 կ.

Վաճառւում է Թիֆլիսի և գաւառական քաղաքների գրավաճառանոցներում և Աղէքսանդրապոլ՝ հեղինակի մօտ: